ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ANQA-2022/63

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ապրիլի 2022 թ. N 63

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱՐԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ ՀՀ ԳԱԱ «Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկ /ԳԿՄԿ/

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24 դ

Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը՝ **ինստիտուցիոնալ հավատարմագրում, 4 տարի ժամկետով՝ 11.05.2017թ.- 11.05.2021թ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2021 թվականի հոկտեմբերի 22-ին Հավատարմագրման Հանձնաժողովի նիստում քննարկեց ՀՀ ԳԱԱ «Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի (այսուհետ՝ ԳԿՄԿ, Կենտրոն) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝ 5 հոկտեմբերի 2020թ.

վերանայված ինքնավերլուծության ներկայացում՝ 31 մայիսի 2021թ.

փորձագիտական այցի իրականացում՝ 13-16 սեպտեմբեր 2021թ.

փորձագիտական զեկույցի ներկայացում՝ 30 դեկտեմբերի 2021թ.

թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում՝ 21 փետրվարի 2021թ.

ՀՀ ԳԱԱ «Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից անբավարար է գնահատվել **«Կառավարում ու վարչարարություն»** չափանիշը:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով ԳԿՄԿ-ի կողմից ներկայացված ինքնավերլուծությունը, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ԳԿՄԿ-ի ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

ԳԿՄԿ-ն 2015 թվականին ստացել է ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով և, հաշվի առնելով հավատարմագրման գործընթացի շրջանակում ստացված խորհրդատվությունները, կազմել է բարելավման գործողությունների ծրագիր: Կենտրոնը մի շարք ոլորտներում իրականացրել է բարելավմանը միտված փոփոխություններ:

1. ***Կենտրոնն հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում***

Նախորդ հավատարմագրումից ԳԿՄԿ-ն իրականացրել է բարելավումներ ՄԿԾ-ներում. վերջնարդյունքների վերանայման, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության, առարկայական ծրագրերի նոր ձևաչափի ներդրման տեսակետից: Իրականացվող կրթական ծրագրերը կապակցվում են ՀՀ ԳԱԱ ինստիտուտների առաջնահերթությունների հետ: ՀՀ ԳԱԱ ինստիտուտների հետ անմիջական կապը նպաստել է ՄԿԾ-ների գիտահետազոտական բաղադրիչի ապահովմանը:

ԳԿՄԿ-ում 2020թ. մշակվել և հաստատվել է «ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգը», որը սահմանում է Կենտրոնի կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները: Սակայն ՄԿԾ-ները հիմնականում դեռ չեն ենթարկվում արտաքին գնահատման: Որոշ մասնագիտությունների իրականացման, բովանդակության, ՊԴ կազմի, նյութատեխնիկական հագեցվածության առումով առկա է դրական փորձ, ինչը սակայն ինստիտուցիոնալիզացված չէ և սահմանափակվում է որոշ կրթական ծրագրերով (օր՝ «Բնապահպանություն և բնօգտագործում»):

Կենտրոնն իր մասնագիտություններն իրականացնելու համար ունի անհրաժեշտ պրոֆեսորադասախոսական կազմ, որը սակայն հիմնականում հենվում է ՀՀ ԳԱԱ ինստիտուտների մարդկային ռեսուրսների վրա: ՊԴ կազմի կայունության ապահովման համար ԳԿՄԿ-ի զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսվել է կիրառել փոխհատուցման և պարգևատրման համակարգ, հստակ իրավակարգավորել աշխատանքային հարաբերությունները, խրախուսել երիտասարդ դասախոսների մասնագիտական աճը և այլն:

Կենտրոնը, կիրառելով նաև ՀՀ ԳԱԱ-ի ռեսուրսները, ստեղծում է կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ միջավայր:
ԳԿՄԿ-ը հիմնականում ապահովում է որակավորումների արժանահավատ շնորհում, իսկ առկա խնդիրներն ու ռիսկերը հաղթահարելի են կառավարման համակարգի բարեփոխման արդյունքում:

2. Կառավարման և որակի ապահովման համակարգերը հիմնականում աջակցում են որակավորումների շնորհման արժանահավատության բարելավմանը

Կենտրոնն առաջնորդվում է հաստատված ռազմավարական ծրագրով և առաջին հավատարմագրումից հետո մշակել է նաև գնահատման առանցքային չափանիշներ: Բացակայում են, սակայն, արդյունավետության գնահատման ցուցիչները, ինչն դժվարեցնում է ռազմավարության ներդրման արդյունավետության գնահատումը, ինչպես նաև թիրախային ցուցիչների հիման վրա նպատակաուղղված ռազմավարական կառավարումը: Նշյալ բացը խնդիրներ է առաջացնում նաև միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման, ստորաբաժանումների միջև աշխատանքի բաժանման, հաշվետվողականության, մշտադիտարկման մեխանիզմների արդյունավետության տեսանկյունից:

Կառավարման համակարգը կարևորում է որակի ապահովումը և դրա զարգացումը: Առկա են տվյալների հավաքագրման մեխանիզմներ և համակարգեր. հատկապես մեծ թվով վերլուծություններ և տվյալներ ապահովում է որակի ապահովման կենտրոնը: Սակայն որակի ապահովման կառույցի իրականացրած վերլուծությունների հիման վրա որոշումների կայացումը դեռևս արմատավորված մշակույթ չէ:

Կառավարման և որակի ապահովման համակարգերը դեռևս բավարար ինստիտուցիոնալացված չեն, և չի գործադրվում բավարար ռազմավարական մոտեցում, ինչը վտանգում է զարգացման կայունությունը:

3. *Միջազգայնացումն ու հետազոտական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորորումների արժանահավատ շնորհմանը*:

ԳԿՄԿ-ն ունի հետազոտական ոլորտում իր հավակնություններն արտահայտող ռազմավարական ուղղություններ, փորձում է ստեղծել նախադրյալներ հետազոտական գործունեության միջազգայնացման համար, խթանում է հետազոտության իրականացումը և դրա փոխկապակցումն ուսումնառության գործընթացի հետ, փորձում է արդյունավետ կապեր ստեղծել ակադեմիայի համապատասխան ինստիտուտների հետ՝ խթանելով կրթություն-հետազոտություն կապը:

Նախորդ հավատարմագրումից հետո ԳԿՄԿ-ը կանոնակարգելով միջազգայնացման և արտաքին կապերի զարգացմանն ուղղված աշխատանքները՝ մշակել է զարգացման ռազմավարություն, ակտիվացրել է իր կապերը ինչպես տեղական, այնպես էլ միջազգային գործընկերների հետ, որը նպաստել է կրթական ծրագրերում և տարբեր դասընթացներում միջազգային փորձի ուսումնասիրմանն ու տեղայնացմանը:

Գործընթացների համակարգումը որոշակի ազդեցություն են ունեցել կրթական ծրագրերի միջազգայնացման, ինչպես նաև աշխատակազմի կարողությունների զարգացման վրա:

Կենտրոնում իրականացվող հետազոտական գործունեությունը, միջազգայնացմանն ու արտաքին կապերին ուղղված գործընթացները և շահակիցների հետ հետադարձ կապը զարգացման և առաջխաղացման հնարավորություն ստեղծում են հաստատության համար:
Սակայն հետազոտական և միջազգայնացման հավակնություններին հասնելու համար դեռ բավարար արդյունքներ չկան՝ չնայած առկա են դրանց զարգացման նախադրյալները ՀՀ ԳԱԱ հիմքի վրա: Խնդիրը կրկին հանգում է ռազմավարական կառավարման և ինստիտուցիոնալիզացման պակասին:
4. Առկա են թերացումներ, որոնք առանցքային ազդեցություն չունեն որակավորման արժանահավատ շնորհման տեսանկյունից, ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը հիմնականում իրատեսական է, բայց որակական փոփոխությունների հանգեցնելու համար պետք է առավել կարևորվի Կառավարման համակարգի խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությունը և ինստիտուցիոնալացվեն գործընթացները:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. ՀՀ ԳԱԱ «Գիտակրթական միջազգային կենտրոն» հիմնարկին շնորհել ինստիտուցիոնալ **հավատարմագրում 4 /չորս/ տարի ժամկետով:**
2. Հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով «Կառավարում ու վարչարարություն» ոլորտում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:
3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - Ռազմավարական պլանավորման արդյունքի գնահատման ցուցիչներն առավել իրատեսական ու չափելի դարձնելուն և դրանք նպատակներին, խնդիրներին ու գործողություններին կապակցելուն,
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի կատարողականի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - ֆինանսների բաշխման քաղաքականության բարելավմանը՝ նպատակուղղելով ՌԾ և ՄԿԾ նպատակների իրականացմանը,
   - վերլուծությունների, հստակ քանակական և որակական տվյալների վրա հիմնված որոշումների կայացմանը և հաշվետվությունների իրականացմանը,
   - կրթական ծրագրերի մշակման և վերանայման, ինչպես նաև որակի ապահովման գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավմանը,
   - ՄԿԾ-ների բարելավմանը՝ ներառելով առարկայական ծրագրերի մակարդակով մանրամասն և չափելի վերջնարդյունքներ, ուսումնառության և դասավանդման մեթոդներ, ինչպես նաև ուսանողներին տրվող հանձնարարությունները:
   - բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - ուսումնառության և հետազոտության կապի ամրապնդմանը,

- Կենտրոնացված կերպով արտաքին կապերի զարգացմանը և քիչ ակտիվ ամբիոնների խրախուսմանը,
- Կենտրոնի գործունեության վրա որակի ապահովման գործընթացների ազդեցության բարձրացմանը և ԳԿՄԿ տարբեր ամբիոններում/ինստիտուտներում առկա լավ փորձի դուրսբերման և տարածման մեխանիզմների կատարելագործմանը:

4. Կազմակերպել ԳԿՄԿ-ում իրականացվող մասնագիտության կրթական ծրագրերի ներքին աուդիտ արտաքին փորձագետների ներգրավմամբ:
5. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 2 տարի մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով Կենտրոնի գործունեության բարելավումը, նորարարություններն ու ձեռքբերումները:
6. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկման ենթարկել ԳԿՄԿ-ի գործունեության արդյունավետությունը՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում հավատարմագրման պետական գրանցամատյանում գրանցվելու պահից:

Հավատարմագրման Հանձնաժողովի
նախագահ **Ա. Սաղյան**
2022 թ. ապրիլի 22
ք.Երևան